

Մրցույթի հայտարարություն

Աշխատանքի նկարագիր

Երևանի առևտրաարդյունաբերական պալատը «Բարեփոխումների երկխոսության հզորացում» (2-րդ փուլ) ծրագրի շրջանակներում հայտարարում է դիրքորոշման փաստաթղթերի մշակման մրցույթ (policy papers) հետևյալ ոլորտներում՝ հարկային բարեփոխումներ, տեսչական բարեփոխումներ և ՓՄՁ-ների քաղաքականություն: Մանրամասն աշխատանքի նկարագիրը ներկայացված է ստորև:

Պահանջվող որակավորումներ՝

- Բարձրագույն կրթություն՝ Տնտեսագիտական, տեխնիկական, սոցիոլոգիայի, սոցիալ-տնտեսական զարգացման մասնագիտություններով
- Առնվազն 5 տարվա փորձ ուսումնասիրությունների և հետազոտությունների անցկացման, վերլուծական աշխատանքների կատարման ոլորտներում
- պետական մարմինների հետ քննարկումների, բանակցությունների անցկացման և/կամ մասնակցության փորձ
- Փորձ օրենսդրական նախաձեռնությունների և կարգավորման դաշտերում վերլուծությունների և ուսումնասիրությունների ոլորտներում: Գործարար շահերի պաշտպանության ոլորտում փորձի առկայությունը կդիտվի որպես առավելություն:
- Մասնավոր հատվածին վերաբերող օրենսդրության և կարգավորումների իմացություն, ներառյալ 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող հարկային օրենսգրքի դրույթների իմացություն
- Պատշաճ կերպով գրավոր փաստաթղթեր կազմելու, հաղորդակցման և խնդիրների հստակ ձևակերպման ունակություններ:

Դիմելու ընթացակարգը՝

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է Երևանի առևտրաարդյունաբերական պալատի էլ. հասցեին (info@yercce.am) ուղարկել ռեզյումե հայերեն և անգլերեն լեզուներով, իսկ կազմակերպությունների դեպքում նաև կազմակերպության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն առավելագույնը 1 էջի սահմաններում:

Խնդրում ենք նամակի վերնագրում նշել հետևյալ երեք ուղղություններից մեկը՝
«Հարկային Բարեփոխումների քաղաքականության վերաբերյալ դիրքորոշման
փաստաթղթի մշակման մրցույթ»

«Տեսչական Բարեփոխումների քաղաքականության վերաբերյալ դիրքորոշման
փաստաթղթի մշակման մրցույթ»

«ՓՄՁ քաղաքականության վերաբերյալ դիրքորոշման փաստաթղթի մշակման
մրցույթ»

Միայն ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

ԵՐԵՎԱՆԻ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Դիրքորոշման փաստաթղթերի մշակում տնտեսական քաղաքականության վերաբերյալ
«Բարեփոխումների երկխոսության հզորացում» ծրագիր (2-րդ փուլ)

Աշխատանքների շրջանակը

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Երևանի առևտրաարդյունաբերական պալատը (Երևանի ԱԱՊ)՝ Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) աջակցությամբ, իրականացնում է ծրագիր, որը նպատակաուղղված է հայ գործարար համայնքին՝ շահերի պաշտպանության իրականացման միջոցով ներգրավել գործարար ոլորտում ժողովրդավարական բարեփոխումների գործընթացում և ամրապնդել Գործարար շահերի պաշտպանության ցանցի (Ցանց) կարողություններն ու առաջնորդությունը:

Այս ծրագիրը կկատարի Ցանցի կողմից սահմանված բարեփոխումների երեք առաջնահերթ ոլորտների ավելի խորքային վերլուծություն, որոնք առանձնացվել են մարզերում կլոր սեղան քննարկումների ընթացքում արտահայտված արձագանքների հիման վրա և կխրախուսի գոյություն ունեցող պետություն-մասնավոր հատված երկխոսության ուղիները՝ քարոզելու համար տնտեսական բարեփոխումների քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ:

2. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

“Գործարար շահերի պաշտպանության ցանցը” (Ցանց) գործարար ասոցիացիաների, առևտրաարդյունաբերական պալատների և տնտեսական ոլորտի զարգացմանն աջակից կազմակերպությունների ցանց է, որը նպատակ ունի նպաստել Հայաստանում սոցիալ-տնտեսական բարեփոխումներին և զարգացնել մասնավոր ձեռնարկատիրությունը՝ ապահովելով գործարար համայնքի և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն ու մասնակցությունը պետական քաղաքականության մշակման, իրագործման, կառավարման և գնահատման գործընթացում: Ցանցը նպատակ ունի

գործարար համայնքի ձայնը հասանելի դարձնել պետական մարմիններին և առաջ քաշել փոքր և միջին բիզնեսի և դրա շահառուների շահերը:

Հայաստանի Ազգային գործարար օրակարգը մշակվել է 2016թ-ին Ցանցի կողմից որպես գործարար միջավայրի բարելավման և ներդրումների խրախուսման գործիք: Այն բացահայտում է տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտները և ընդգծում այդ խոչընդոտները վերացնելու համար անհրաժեշտ բարեփոխումները: Ազգային գործարար օրակարգը ստեղծվել է Երևանում և մարզերում անցկացված համապարփակ հարցման հիման վրա՝ բիզնեսի զարգացմանը խոչընդոտող օրենսդրական, վարչական, ինստիտուցիոնալ արգելքների վերաբերյալ: Հայկական բիզնես ներկայացուցիչների կարծիքով Հայաստանում գործարարության զարգացման գլխավոր խոչընդոտներն՝ ըստ հարցման արդյունքների, հետևյալն էին՝ անարդար մրցակցային միջավայր, կոռուպցիոն ռիսկեր, հարկային համակարգ, անկատար պետական տեսչական համակարգ, անարդյունավետ ՓՄՁ քաղաքականություն, ոչ հասանելի ֆինանսական ռեսուրսներ, բիզնեսի համար անհրաժեշտ ենթակառուցվածքի զարգացման ցածր մակարդակ: Մարզային կլոր սեղաններին և ներքին քննարկումներին հետևեց ԳՇՊՑ անդամների կողմից երեք ոլորտների ընդգրկում 2016թ. Ազգային գործարար օրակարգում՝ հարկային համակարգ, ՓՄՁ զարգացման քաղաքականություն, տեսչական համակարգ: ԱԳՕ ամբողջական փաստաթուղթը ներկայացված է Երևանի առևտրաարդյունաբերական պալատի վեբ կայքում:

Ավելի խորքային վերլուծություն ստանալու համար ԱԳՕ երեք առաջնահերթությունների վերաբերյալ, և մշակելու համար կոնկրետ տնտեսական քաղաքականության վերաբերյալ առաջարկներ, Ցանցը կներգրավի երեք փորձագետ՝ մշակելու համար փաստաթղթերի նախնական տարբերակներ՝ մեկ փաստաթուղթ յուրաքանչյուր ԱԳՕ ոլորտի համար: Փաստաթղթերը կներառեն հայկական բիզնեսի խնդիրները, ինչպես նաև կառաջարկեն դրանց վերաբերյալ հստակ և կիրառելի լուծումներ:

Մոբիլիզացնելու համար ավելի լայն բիզնես աջակցություն ԱԳՕ երեք առաջնահերթությունների համար, 2017թ. աշնանը Ցանցը կկազմակերպի հինգ քննարկում Հայաստանի մարզերում: Որպես այս քննարկումների մաս, Ցանցը կներկայացնի ԱԳՕ-ն Երևանից դուրս գտնվող բիզնեսներին և ավելի լայն ներդրում և աջակցություն ձեռք կրերի ԱԳՕ աջանահերթ ոլորտների բարեփոխումների համար: Այս քննարկումների ընթացքում հավաքված արձագանքները, ինչպես նաև Հայաստանում առանձին ձեռնարկությունների հետ խորհրդակցությունները կօգտագործվեն փաստաթղթերի մշակման գործընթացում:

Երբ փաստաթղթերը պատրաստ լինեն, Երևանի ԱԱՊ-ն Ցանցի համար կկազմակերպի և կանցկացնի երեք թեմատիկ կլոր սեղաններ՝ հրապարակելու համար դիրքորոշման փաստաթղթերը նշված ոլորտներում քաղաքականության վերաբերյալ և համախմբելու համար գլխավոր շահառուներին՝ այդ թվում նաև պետական պաշտոնյաներ, փորձագետներ, բիզնես ասոցիացիաների և բիզնեսին աջակցող ՀԿ-ների ներկայացուցիչներ, որպեսզի

քննարկվեն բարեփոխումների համար հստակ քայլեր: Այս կլոր սեղանների ժամանակ երեք փորձագետները կներկայացնեն փաստաթղթերի արդյունքներն ու որոշ առաջարկություններ:

3. ՆՊԱՏԱԿԸ, ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ / ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մշակել տնտեսական քաղաքականության վերաբերյալ դիրքորոշման արտակայտման փաստաթղթեր ԱԳՕ հետևյալ երեք առաջնահերթություններին համապատասխան՝

- ՓՄՁ զարգացմանը նպաստող քաղաքականության հզորացում,
- հարկային համակարգի բարելավում,
- պետական տեսչական համակարգի կատարելագործում:

Ակնկալվում է, որ Փաստաթղթերում պետք է ներառվել հստակ խնդիրներ և առաջարկեն պրոֆեսիոնալ լուծումներ, որը հնարավոր կդարձնի բարեփոխումների իրագործումը: Փաստաթղթերը նաև կներառեն շահերի պաշտպանության քարոզարշավի ընթացքում կառավարությանը ներկայացվելիք գործնական, կիրառելի և կոնկրետ քաղաքականության վերաբերյալ լուծումներ:

Այս նպատակով Երևանի ԱԱՊ-ն կհամագործակցի համապատասխան փորձառություն ունեցող տեղական փորձագետների հետ՝ փաստաթղթերի պատրաստման նպատակով, օգտագործելով նաև Ցանցի անդամների փորձը և կներկայացնի ԱԳՕ նշված բիզնեսի խոշոր խոչընդոտների խորքային վերլուծություն:

Հետևյալ հիմնական առաջադրանքները/գործունեությունը պետք է կատարվեն ծառայություններ մատուցող փորձագետների/կազմակերպությունների կողմից՝

- Հետազոտել ԱԳՕ երեք առաջնահերթ ոլորտները՝ առկա նյութերի հետազոտության, Ցանցի անդամների և հայկական բիզնեսների հետ հարցազրույցների միջոցով: Այս հետազոտությունը կներառի.
 - համապատասխան թեմայով իրավական դաշտի վերլուծություն՝ օրենքներ, հրամանագրեր և այլ փաստաթղթեր,
 - շահառուների վերլուծություն,
 - վերլուծություն, թե ինչպես են այլ (հարևան) երկրները լուծել նմանատիպ խնդիրներ
- Ոլորտային քաղաքականության հետազոտության և վերլուծության հիման վրա խորհրդակցել Երևանի ԱԱՊ և Ցանցի անդամների հետ առաջնահերթ խնդիրների վերաբերյալ լուծումներ և առաջարկություններ մշակելու համար
- Պատրաստել ընտրված երեք առաջնահերթ ոլորտների Փաստաթղթերի նախնական տարբերակները՝ հիմնվելով Երևանի ԱԱՊ և Ցանցի անդամների հետ ունեցած խորհրդակցության վրա՝ հստակ լուծումների և առաջարկությունների վերաբերյալ:

- Ծրագրի շրջանակներում մասնակցել թեմայի հետ կապված շրջանային և թեմատիկ կլոր սեղաններին, հանդիպումներին և քննարկումներին
- Ցանցի քննարկումների և շրջանային կլոր սեղանների հիման վրա վերանայել և ստուգել փաստաթղթերի նախնական տարբերակները
- Վերանայել փաստաթղթերը հիմնվելով ՄՁՄԿ արձագանքի վրա

Ակնկալվում է, որ յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ունենա նվազագույնը 10 էջ՝ չներառելով հավելվածը: Փաստաթղթերի պարունակությունը պետք է համակարգվի և համաձայնեցվի Ցանցի անդամների հետ: Փաստաթղթերից յուրաքանչյուրը պետք է ներառի հետևյալը.

- Ամփոփ մաս
- Պատմությունը/համատեքստը՝ ներառյալ Փաստաթղթի մեթոդաբանությունը
- Խնդրի բացատրությունը և դրա կարևորությունը՝ Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և Հայաստանի տնտեսության համար
- Խնդրի լուծման մոտեցումները
- Առաջարկություններ և դրանցից ակնկալվող ազդեցությունը
- Եզրակացություն
- Հավելված

4. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ/ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Անձինք կընտրվեն ԱԳՕ առաջնահերթ ոլորտներում նրանց ունեցած փորձառության հիման վրա: Դիտարկվող անձինք պետք է ներկայացնեն ռեզյումե և իրենց ունեցած որակավորումների ցանկը:

5. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դիմումների ընդունելության ժամկետը կտևի մինչև 2017 թ. նոյեմբերի 30-ը ներառյալ:

Մինչև 2017 թ. դեկտեմբերի 15-ը կկատարվի ծառայություն մատուցողների ընտրությունը ինչպես նաև վերջիններիս հետ պայմանագրերի կնքումը:

Փաստաթղթերի նախնական տարբերակների պատրաստման ժամանակահատվածը նախատեսվում է 2017թ. դեկտեմբերի 15-ից հունվարի 31-ը: Նախնական տարբերակները պետք է ներկայացվեն Երևանի ԱԱՊ՝ մեկնաբանություններ ստանալու համար մինչև 2018թ. փետրվարի 1-ը: Երևանի ԱԱՊ և ՄՁՄԿ կողմից ստացված մեկնաբանությունները հաշվի առնելուց հետո Փաստաթղթերի արդեն վերջնական տարբերակները կներկայացվեն Երևանի ԱԱՊ մինչ 2018թ. մարտի 1-ը: